ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

09 հունվար 2024, № 8.6

««ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՈՒՍԱՆՈՂԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՏՄԱՆ ԵՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ» ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2023 թ. դեկտեմբերի 14-ի «ՀՀ ԿԳ նախարարի 2011թ. նոյեմբերի 17-ի N 1242-Ն հրամանում փոփոխություն և լրացում կատարելու մասին» N 148-Ն հրամանը՝ ՇՊՀ Գիտական խորհուրդը **ո ր ո շ ու մ է.**

Հաստատել ««Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Ուսանողի ուսումնառության ընդհատման և ուսանողական իրավունքների վերականգնման կանոնակարգում» առաջարկվող փոփոխությունն ու լրացումը (առաջարկվող փոփոխությունն ու լրացումը կցված է):

ՇՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ե. ՍԵՐՈԲՅԱՆ

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ուսանողների ուսումնառության ընդհատման և ուսանողական իրավունքների վերականգնման կանոնակարգում» կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

7 –րդ կետի 1 ենթակետը <u>փոփոխել</u> և շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«Ժամկետային պարտադիր կամ շարքային և սպայական կազմերի պարտադիր զինծառայողների՝ ծառայության ընթացքում պայմանագրային զինվորական կամ այլընտրանքային ծառայության զորակոչվելու դեպքում»:

22-րդ կետը <u>լրացնել</u> 22.1. ենթակետով և շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«Սույն կանոնակարգի 7-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն ուսումնառությունը դադարեցրած ուսանողը ՀՀ կառավարության 2023թ. փետրվարի 9-ի N 160-Ն որոշման N 1 հավելվածով սահմանված կարգով պայմանագրային զինվորական ծառայության անցնելու դեպքում, կարող է վերականգնել ուսանողական իրավունքները հեռակա ուսուցման համակարգում կամ մինչև պայմանագրի ավարտը երկարաձգել ուսումնառությունը դադարեցնելու ժամկետը»: